

ԱՐԵՎԱՏՅԱՆ

ԱՐԵՎԱՏՅԱՆ
ՄԵՐ

1938
ՆԻԿ ԵՊՐՔ

M. Minasian

891.99

Ա-42

891.99

Ա-42

30 MAY
89

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Առանձին հատորներով լոյս տեսած գործերը .

1. Հոօ Կիմը - Թիֆլիս . սպառւած .
2. Ժողովածու Երկերի . հատ . I.
«Պատկերներ» - Մուկւա . սպ .
3. Ժողովածու Երկերի . հատ II.
«Խեղները» - Թիֆլիս . սպ .
4. Լոռութիւնը - Թիֆլիս . Բոստոն . սպ .
5. Խտալիայում - Թիֆլիս . սպ .
6. Մրրիկի Սուրբը - Թիֆլիս . սպ .
7. Ազատութեան Ճանապարհին - Թիֆլիս .
Բոստոն . \$1.50 .
8. Արցունիքի Հովիտը - Թիֆլիս . սպ .
9. Արազը - Թիֆլիս . սպ .
10. Շվեյցարական Գիւղը - Թիֆլիս . սպ .
11. Կեանիքի Վէպը - Թիֆլիս . սպ .
12. Անդունդը - Թիֆլիս . սպ .
13. Մոլսիրների Տակից - Թիֆլիս . սպ .
14. Խաւարի Մէջ - Թիֆլիս . սպ .
15. Պարտւածներ - Պոլիս . սպ .
16. Հայրենիքիս Համար - Բոստոն . \$1.00 .
17. Ճամբորդը - Բոստոն . սպ .
18. Քրիստափոր Միհայէլեան - Բոստոն . սպ .
19. Կարօս Հայրենի - Բոստոն . \$1.00 .
20. Խմ Գիրքը . հատ . I. - Փարիզ . \$1.50 .
21. Խմ Գիրքը . հատ . II. - Փարիզ . \$1.50 .

Պատրաստ է տպագրութեան համար
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

Քաղաքական Օրագիրը

Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօգան

Վ. Հ. ՀԵՂԻԿԻՆԻ ՀԱՅԻ

Խ Ի Կ Ա Ր Ա Ւ Կ Ա Ռ Ո Ւ Ց Հ Ե Զ .

ՍՈՒՐԵ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԿԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
ST. NERSES SHNORHALI
L I B R A R Y
ARMENIAN PRELACY

Վ

439



John Thompson

5.02.2013

18474

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Առանց ցաւի խոր զգացումի եւ վարանումի չէ, որ լոյս
ենք ընծայում Ա. Ահարոնեանի այս հատորը՝ «Մենուքեանս
Մէջ»:

Այս հատորը, որքան էլ իր գեղարւեստական ձեւի մէջ գրե-
քէ լրացած, եքէ հրատարակւէր հեղինակի կողմից, հաւանա-
բար, ինչ ինչ փոփոխութիւնների եւ յդկումնների ենթարկւէր:
Բայց հեղինակի գրիչը տարիներից ի վեր լոել է եւ, ո'վ գիտէ,
թէ երբ եւ իցէ նորից պիտի շարժէի՞ այն: Ահա թէ ինչո՞ւ որո-
շեցինք լոյս ընծայել այս հատորը այնպէս, ինչպէս որ է, դե-
կավարւելով հեղինակի այն ցուցմունքներով, որոնք կցւած
էին ձեռագրին:

«Մենուքեանս Մէջ»-ը, ինչպէս կը տեսնի, արձակ քա-
նաստեղծութիւնների, խոհերի եւ կարճ պատմածքների մի ժո-
ղովածու է, որ ամփոփած էր հեղինակի ձեռքով գրւած մի
փոքրիկ տետրակի մէջ:

Հրատարակութեան դէպֆում Ա. Ահարոնեանը ծրագրած
է եղել նիւթերի երկու դասաւորութիւններ, որոնք արձանա-
գրւած են երկու զատ թերթիկներու վրայ:

Այդ դասաւորութիւններից մէկը հետեւեալն է ..

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

- Ա. Ստուերներն իջնում են.
- Բ. Մելանխոլիա.
- Գ. Թիթեռ.
- Դ. Սիրտ իմ.
- Ե. Թաղումը.
- Զ. Կախարդական Տանար.
- Է. Տիեզերական Զանգը.
- Ը. Հոգիս Գերեզման է.



2460 - 2011

ԵՐԿՐՈՌԴ ԲԱԺԻՆ

- Ա. Կինը.
- Բ. Երաժշտութիւն.
- Գ. Երջանկութիւն.

Երկրորդ քերթիկի վրայ դասաւորած են հետեւեալ նիւրերը եւ հետեւեալ կարգով .-

1. Սիրո Խմ.
2. Ծերուկ Զանգահարը.
3. Նւազ (Յեթ-հովկն).
4. Կախարդական Տաճար.
5. Հոգուս Կանքեղը.
6. Թիթեռը.
7. Թաղումն.
8. Սփինխ.
9. Մելանիսոլիա.
10. Կեանիս Արեւը Թեժւեց.

Այս հատորը կազմելիս մենք օգտվել ենք Ա. Ահարոնեանի ընտրած նիւրերի այդ երկու ցանկերից էլ, հատորի մէջ ամընփելով հեղինակի յիշատակած բոլոր կտորները։ Դրանցից զատ հատորին աւելացրել ենք բոլոր այն կտորները, որոնք կային «Մենութեանս Մէջ»-ի ձեռագրի մէջ, բայց չէին յիշատակւած վերի ցանկերում։

«Մենութեանս Մէջ»-ը կազմող անտիպ կտորների շարքում, ինչպէս կը տեսնեի, կան երկու բանաստեղծութիւններ՝ «Կախարդական Տաճար» եւ «Կեանիս Արեւը Թեժւեց», որոնք նախապէս լոյս են տեսել «Կարօտ Հայրենի» հատորի մէջ։ Քանի որ, սակայն, այդ երկու կտորներն էլ հեղինակը դրել է «Մենութեանս Մէջ»-ի ցանկերի մէջ, մենք պարտք համարեցինք դրանք եւս միացնել ներկայ հատորին։

ՀՐԱՍՏԱԿԻՒՑ

Հ Ի Կ Ա Ռ Ա Կ Ա Ռ Ե Չ Զ .

Նիւրեռք.

1938.

Prolog.

Hypoth.

Лінія від $\frac{1}{2}$ до $\frac{1}{2}$ відповідає $\frac{1}{2}$ від $\frac{1}{2}$ від $\frac{1}{2}$

21/07/1918. 5-1918-9194.

52 8

UHRS HUT

Ս'իրտ իմ, դուրսը խաւար է ու մենի մենակ ենի՝
ես ու դու . . .

Զարկերդ եմ լսում, ներդաշնակ ու յամառ ու կեանիս եմ յիշում – խուսափող մի սուեր, հողմավար մշուշ:

Սի՞րտ իմ, քո զարկերին համաչափ՝ ես քայլերս փոխեցի. Խոհերս համակ քո ծոցից ծլեցին՝ բռար ծաղկիներ, ու արցունիքի փոխան՝ ես արիւն լացեցի, քո արիւնը արդար:

Սի՞րտ իմ, ահա յոգնած եմ արդէն, այնպէս եմ
յոգնած, որ գերեզմանի հանգիստն իսկ ինձ բաւ չէ.
իսկ դո՞ւ . . . Դուրսը խաւար է եւ մենք մենակ ենք՝
ես եւ դու . . . Ու դարձեալ զարկերդ եմ լաւմ համա-
շափ ու յամառ, սի՞րտ իմ, սի՞րտ իմ, ե՞րբ կը դադա-
րես . . .

Փետր. 5, 1918 – գիշեր.

b. 9

գրանց.

1.
Տիկին Արքունիքի
պատմութեան պահանջման
և աշխարհական պահանջման
առաջարկ առաջ առաջարկ առաջարկ
առաջարկ առաջ առաջարկ առաջարկ առաջարկ
առաջարկ առաջ առաջարկ առաջարկ առաջարկ
առաջարկ առաջ առաջարկ առաջարկ առաջարկ

Հայոց - 1912.

էջ 10



1902 - Թիվլիս.

ՓԱՌՔԸ

Փառքը միշտ փշէ պսակ իմ տանջւած նակատին
Եւ ամբոխի ծափը՝ մի դաժան հեգնանք իմ ծածուկ
քշւառութեան, որից յետոյ՝ տառապող հոգիս մե-
նութիւնն է փնդրում, որպէս խոցւած գազանն իր
ոբջը, մի հին վերք լիզելու համար:

Յուլիս, 1917.

Կեանքս.

Հիմնայի փոշին իւս ո՞չ առջևակար
ականակար առելորդ պահ, որ բարձրացրա
շրջ պահ առաջաւու: Ժի թու նաևս
փշտիկ խուզրէ թէ կրոնցաւը:
և օդու կէն թէ զարուստութեւ:
և Խուզրէ Խ. որ ոչ որ ծառի շի
խուզրէ ու շրջանի թէ ուրեմն
պահ. ու որ Խուզրէ առաջուրաց
օրէս վաշուրոյ. Բայց ու ուրեմն
ու շրջան առջևակարու:

Յունի. 1917.

ԿԵԱՆՔՍ

Կեանքս փոշին եղաւ մեծ ճամբաների անցորդ-
ների ոտների տակ, որ ժամիներն են ցրիւ տալիս
անգք-օրէն: Թունաւոր փշերն են խոցուտել իմ կրունկ-
ները, եւ օձերը լիզել իմ գարշապարները: Եւ երջանիկ
եմ, որ ո՛չ մի ծաղիկ չի խամրել ու չի փոշիացել իմ
ոտների տակ, ե՛ս, որ կեանքիս արշալոյսից մինչեւ
վերջալոյս՝ ժայլում եմ անիծւած ու դաժան ճամբա-
ներով:

Յուլիս, 1917.

Հայոց ու արշակունյաց

Հետո որ Տաղաւորի պարուրքն առ
գուս լինեց որ առանձ շուրջ և ին
արշակունյաց ու Հայ. ինչ թշունէ Իւ.
որ առարջիւ առհամ Տաղաւորի ու արշակուն
~~առ~~ առաջար:

Յունի 1917.

ԱՍՏԵՐ ՈՒ ԱՐՇԱԿՈՒՆՅԱ

Ամեն մի մարդկային վասութիւն հոգուս երկըն-
փից մի ասող է շորքում եւ իմ արշալոյսից մի ցոլֆ.
ի՞նչ երջանիկ եմ, որ աստղերս անհամար են եւ ար-
շալոյսս անմար:

Յունիս, 1917.

2460 - 2017

Էջ 16

Էջ 17



Հունիս.

Ճագիս առելով պատմութեա, որ ուզրու
շահ ու վրաստ համար շնորհած լուսաւուն և մի
ակրած ջուր հանուն բարձրացնեա
սպառքաւ ինչպէս այս շնորհած ուրախութեան
կուն:

Եղանակաւու - Եղանակաւու.

Հունիս 1917.

ՀՈԳԻՆ

Հոգիս աւերակ տաճար է, ուր այրիացած ու վի-
րաւոր հաւատս է լալիս, եւ մի աներեւոյք ձեռք հան-
դարտ խնկարկում է յոյսերիս ու երազներիս ցուրտ
շիրիմների վրայ:

Էլ ո՞ւր աղօթել - Էլ ո՞ւմ աղօթել:

Յուլիս, 1917.

Հայրեն

Հայրեն առաջիկ և հրանցիւ.
Հայրած ժամանակակից պահպան
առաջարկ օգնություն. Տայրի իւ,
Պատահական բաշխութեա
սպառա. Տայրի իւ, չար առ իւ
ուս և պարագան յաշու գալու
ու նորու Հայրեն 1917.



1903 - Թիֆլիս.

ԶԱՐԻՔԸ

Չարիքը սուերի պէս կրունկիս կախւած մնաց եւ
նենգուքիւնը օճի պէս սրունֆներիս գալարւց. Մա'յր
իմ, մա'յր իմ, մոռացա՞ր արդեօֆ խաչակնել
օրբանս. մա'յր իմ, չար աչքերի դէմ դիւք-ական
յուլունֆներդ ո՞ւր կորան:

Յուլիս, 1917.

ԳՈՐԳՈԹԱՆ

Խաչս ծանր է, Գողգոթաս հեռու.

Ինչո՞ւ այս ճամբան անծայր ու դաժան, երբ
հեռու՝ թէ մօտ, վախճանս գիտեմ:

Փետրիար, 1918.

Չոշգործակ.

իւսկ ձաւք, ջայռակա պատ.
Առա՞ ոյս ձաւք առաջը ու
պատակ. Երբ եւսո՞ւ իւս Տիր,
Վարդակա պերք.

Ժ. Կոքան 1918.

ՀՅՈՐ ՑԱԽԸ

Հյուր ցախը

Եղանակ Շամբ, որ թեպեր առ ի շի
ցախը երդուաց օրեւ որ ո՞վ առ ի շի
բարուած չկատ քարից լուսութ ու համբ
զարդութ.

Հյուր ու ցախ ցախ ոչ ժաման
անք ու ոչ ժամանէր.
Հայութ 1918.

Հոգիս ֆնար է, որ խինդից աւելի՝ ցատվ հեծե-
ծաց մինչեւ որ մի ուժեղ ու խորութեկ վիշտ փշրեց
լարերը ու համբ դարձրեց.

Հզօր ու դաժան ցաւը ո՞չ ֆնար ունի եւ ո՞չ երգ
ունի:

Փետրւար, 1918.

Համարդաբն-թշուառ

Ապրիլի 17 թշուառուն զնոքի
համարդա Հայոց թագա վայրութեան
հայութ. Ի անշատի բարեկար զնոք.
Տարբ պահեա. Սակա շնչառ ու առ,
դաշնամահա - ի անշատի. Ի անշատի
ի անշատի. Ես անշատի անշատի
~~որդա առ ան անշատի առ ան անշատի~~
մայ. 1918.

ԵՄ ԱՆՁՈՐ ԵՄ ՈՒ ԹՇԻԱՌ

Մարդկային թշուառութիւնը կեանիս խաւարն
է եւ կարեկցութիւնը լապտերը հոգուս. Եթէ անզօր
եմ խեղների լացը՝ ժպտի փոխել, ցաւը – ցնծութեան,
տանջանիք՝ հանգատի, ես նոյնիքան խեղն եմ, նոյնի-
քան կարօտ կարեկցութեան, որքան ամենին աննարը,
ամենին թշուառը:

Փետրիար, 1918.

Հայոց թիւ 74. Տ.

Կոմիտաս ու Վահագին իշխան
Շահնշահ. Աշոտի դարձութեան
ազգական պատճեան է առաջին առաջարկը. Հայոց թիւ 74. Տ.
Կոմիտաս իշխան, Մայուս առաջարկը առաջարկը. Հայոց թիւ 74. Տ.
Կոմիտաս իշխան. Հայոց թիւ 74. Տ.

Երևան 1918.



1905 - Թիվ 74. Տ.

ԼՐՈՒԹԻՒՆԸ

Կեանիս ողբերգութիւնը խորունկ լուրջիւնն է.
աչքերիս փոխարէն միշտ հոգիս լացեց. շրբունիս
ժպտին, ծիծաղին, խինդին, միշտ պնմասն մնաց
հոգիս վիրաւոր. չէ՞ լինը յանախ ալեկոծ հողմից՝
հանդարտ է պահում խորքերը խաւար:

Փետրվար, 1918.

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Տիւրութիւն ջակի ու առաջա-
նութեան որ շուտու որ
իրացնի չի պետք դաշտան.
Խան առշամաս օպապակացնաւ,
շուտ ու ու զար - առ
ու օպապակաց կառաւած
հուստունայ առայսաբ:

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Հանդերձեալ կեանի ու անմահութեան մեր հա-
ւատը մեր իրական կեանի քշւառութեան ամենա-
մեծ ապացոյցն է. ցաւած կոզու ու նխլւած աննարու-
թեան երազած հասուցումի պատրանի:

February 1913.

ԿԵԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Կեանիքի իմաստը խոհուն ցան է. իրական գեղեցկութիւնը աղբիւր է վշտի. վիշտը յաւիտենական արեւելք՝ որից ժայթքում են մեր հոգիների բոլոր արշալոյսները:

Իմաստութիւն, վիշտ ու կարեկցութիւն կեանքի
յաւիտենական ու միակ զարդերն են եւ երեքն էլ նոյն
խորհուրդն ունեն:

ՓԵՄՐԱՎՐ, 1918.

Gymnophyceophytæ.

Луналь Григорьевича Рождественский.
Григорий Михайлович Григорьев
был ~~старший~~ старший лейтенант, гвардейский
сабельный офицер, участник боев
всея России против мятежных
членов: январь 1918.

ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ


Սպանել կարեկցութիւնը մարդու մէջ՝ միեւնոյն
է, թէ անտառում զնջել բոլոր երգող քոչուններին,
դաշտերից ծաղիկները վերցնել, արշալոյսից գոյները
եւ երկնից բոլոր աստղերը շոբքել:

Февраль, 1918.

Генрих Гейнрихс.

Генрих Гейнрихс
Биограф. Генрих Гейнрихс
Генрих Гейнрихс
Май 1918.

1912 - Гейнрихс.



ՄԱՆՈՒ ԺՊԻՏԸ

Երբ հոգու բոլոր ժպիտներն են մարում մահու
ժպիտը մնում է ամենէն հրապուրիչ:

Մայիս, 1918.

Lepturus

Лютер-Чист, на чистом языке Грец
изрекают чист. Лютер и в шутливом
записе говорит: ~~Был бы я в Греции~~
~~и я бы~~, и в ~~Греции~~ ~~был бы я~~
и ~~был бы я~~ ~~был бы я~~ ~~был бы я~~
был бы я в Греции.

Հրամակ թշնիք ու սպառաւ լեզունք է ։
Եթե այս ու այլ առաջարկ չկատարվի
ու հաջող չկայ իր ու առաջարկ
մի առաջարկ գրաբար է լուսավոր և
արական առաջարկ կատարվի առաջարկ է ։

Aug. 1918.

ՍՓՈՓԱՆՔ

Երանի՛ նրան, ով մեռած յոյսերի վրայ արտաս-
ւել գիտէ. թափած արցունիքի շիբերը բուրալից ծա-
ղիկներ են, որ մի քննոյշ ու խնամուտ ձեռք ցանում
է թանկագին գերեզմանի վրայ:

Հոգուս մէջ այնքան շիրիմներ կան, ծաղիկներից ու խունկից քափուր, որոնք ի զուր են սպասում արցունիքի:

Երանի՛ նրան, ով թաղած յոյսերի ու երազների վրայ իր մենութեան մէջ արտասել գիտէ: Մենութեան արցունիքը ամենէն անկեղծն է եւ ամենէն սփռփիշը:

ՓԵՄՐԻԱՐ, 1918.

ԱՐԵՐ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԿ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY /

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ

Աչքերնիս դէպի մշուշապատ հեռուն՝ մենք միշտ
երջանկութիւն ենք փնդրում, մինչեւ որ յանկարծ
կսկիծով իմանանք, թէ այն անցել ենք առանց իմա-
նալ, առանց տեսնելու, ապրել ենք՝ առանց նաշակե-
լու, ինչպէս ծարաւից պապակած կարաւան, որ
անապատում գիշերով է անցել ովազիսի առջեւից
շուր փնդրելով:

* *

Երջանկութիւնը մեր առջեւը չէ, այլ մեր յետեւը,
եւ այս պատճառով նա երբեք իրականութիւն չէ, այլ
ցաւագին մի յուշ, դառն ափսոսանք, անդարձ մի
կորուստ, որ բնաւ չը լինէր, աւելի լաւ էր:



1912 – Լօգան .

ԱՐՑՈՒՆՔԸ

Ծնած օրից մինչեւ խոր ծերութիւն մեր աշքերը
արցունիք են քափում, մերք բաց՝ աշխարհի առաջ,
մերք ծածուկ՝ մեր հոգու խորքում:

Եւ պարապ արցունիք չը կայ աշխարհում:

Եւ ամեն մի կաքիլ արցունիքն՝ մենի միշտ մի
գերեզման ենի ցողում – յոյսի գերեզման:

Մանուկ՝ մենի լալիս ենի ցոլի ու ծաղկի, աստղ
ու արեւի համար. լալիս ենի ժպտով ու ժպտում ենի
լացով:

Երիտասարդ՝ – մենի սէրն ենի գուրգուրում,
յոյսը պրապտում ու քաղում արցունիքն։ Ալեգարդ
իմաստութիւնն է գալիս, որ կեանիքի խորշում ցաւն
է պրապտում, հզօր ցաւեր, որոնի ամենին էլ մեռած
յոյսեր են։ Ապա լալիս ենի մահը մեր սիրելիների ու
մտերիմների։

Միակ մահը, որ չենի լալիս, դա մեր սեփական
վախճանն է։

Եւ արդեօֆ խանձարութից մինչեւ գերեզման մեր
քափած արցունիքը մեր սեփական մահւան համար
չէ՞ . . .

Մայիս, 1921.

Պարիզ.

ԺՊՏՈՒՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐԸ

Կեանիքը երազների եւ յոյսերի անծայր ու խառնուսիկ մի շարան է:

Ամեն մի իրագործւած իղա միշտ մի փոքրիկ մահ է:

Յոյսը սոսկ ստուերն է մասի եւ բնութեան մի շեղ պատրանիով մենք երջանիկ ենք, երբ յոյսը բռնած մի ժայլ աւելի ենք մօտենում գերեզմանին:

Ամեն մի իրագործւած յոյս մեր գունատ ու ժպտուն գերեզմանափորի բահի մի հարւածն է մայր հողին: Մեր յաղթանակի քրիչի միջից նակատագըրական բահի զրնգոցն է լսում միշտ:

ՄԱՐԴԸ

Մի հին անէծքի տակ կռացած՝ նա ե՛ւ թշւառ է ե՛ւ դաժան: Իր հոգին՝ վատ կրքերի փոքրիկ, արարքներն ու գործերը տրտում ապաշաւանքի աղբիւր. յոյսերը՝ մահու նամբին ցանւած վարդեր, որ քանի հաւաքում է, աւելի մօտենում է նակատագըրական սեւ փոսին: Արարածներից ամենաթշւառն է նա եւ իր թշւառութեան չափ գեշ է իր հոգին:

ԿԻՆԸ

Կինը՝ երազուն ու անարատ հոգիների համար կախարդական տիեզերք է, մի ոսկէ հէֆիաք անծայր ու հմայիչ, նւիրական խորան հինաւուրց տաճարում, ուր սիրող սրտերը մխում են ու այրում պաշտամունքի կրակով։

* * *

Կինը բանաստեղծութեան բանաստեղծութիւնն է եւ արւեստի՝ արւեստը, մտածումներէն ամենէն վսեմը, որ մի գեղասէր Աստւած յօրինեց։ Նա յաւիտենական աղքիւրն է բարձրագոյն յոյզերի եւ վսեմ գործերի. մի աստւածուիի, որի գօրութիւնը սակայն, ինչպէս բոլոր աստւածների պաշտողների հաւատի մէջ է։

* * *

Թագուիի եւ իշխող անքիծ սրտերի վրայ կինը եւ բաց, դիւրընք-եռնելի գիրք է, կամաւոր մի հարն բոլոր նրանց համար, ում կեանքը լոկ ախտաւոր հեշտանիք է եւ սէրը ցոփութիւն։

Աստւածուիու ոսկէ գահոյքն աւելի շուտ է ձանձրացնում նոյնիսկ առաքինի կանանց, քան կրթերի փոքրիկը։ Հեշտասէր կինը քնաւ զոհ չէ իր կրթերին, վասնզի նրա հոգում առաքինութիւնն ու մոլութիւնը, բանականութիւնն ու տարփանքը միշտ զուգընթաց են ու հաւասարազօր։ Մէկը միւսին երբեք չի իշխում։



1921 – Ժերարմէ (Ֆրանսա)։

* *

Լաւագոյն կինն իսկ արժանի չէ սիրող ու երազող
տղամարդի մի կաքիլ արցունիքին:

Ես շատ եմ լացել աշխարհում, եւ միակ արցունիքը, որի համար ափսոսում եմ, դա կնոջ համար թափած արցունիքն է: Ի՞նչ փոյք. երեք մի երաշեռվ ինձ նորից վիճակւէր վերսկսել անցած կեանիս, նոյն աղետաւոր արցունիքը կը թափէի նոյն սիրով: Եւ յետագայ բոլոր սերունդները իրենց ամենէն անկեղծ, ամենէն բեղմնաւոր արցունիքը յաւիտենապէս դարձեալ կնոջ համար կը թափէն:

Կինը յաւիտենական պատրանիքն է եւ պատրանիքներէն ամենէն հզօրը, ամենէն դիւքիչը, անգամ այն ժամին, երբ սրտերի մէջ դառնութեան թոյնն է բամում անողորմաբար:

ԲԵԹՀՈՎԵՆԻ ՆԻԱԳԻ ԱՐՁԵՒ

Որբուկի պէս՝ որ կէս գիշերին խաւարի վախից «մայրիկ» է կանչում – մինչդեռ մայրը վաղուց է մեռած – մենք փնդում ենք Աստծուն Երգի, Կրօնի եւ Արևստի մէջ:

Երգ ու երաժշտութիւն, արևստ ու կրօն, խաւարից վախեցող որբուկի նիշեր են լոկ, որոնք յաւիտեան կը մնան անպատախան:

Այս շենք ու սրտապարար հնչիւնների փոխարեն, որոնք ի զուր Աստւած են որոնում, երանի թէ այն Աստւածը իրօք լինէր, որպէսզի աղօք-քը – տառապանի աղեկտուր կանչ – կարենար նրա դոները բաղխել եւ լացը՝ գերազոյն երաժշտութիւն՝ նրանամբան ցոյց տար տառապող մարդուն:

ՆԻԱԳ

Դիւրական թրթիւններ են հնչիւնները, որոնք չը գիտես ո՞ր կախարդական աշխարհից գալիս են ու հոգուդ վրայ թառում եւ իրենց երփներանգ թեւերի դողդոցով, աստուածային յոյզը թափում էութեանդ վրայ: Ու ձայների ելեւէջների հետ՝ մի անորոշ թախիծ, կորստի կոկիծ է համակում հոգիդ, հեռաւոր ու խուլ մորմոնք մի հակի, որին չես տեսել, չես նանաչում, բայց որ քոնն է, քո հոգու մի մասը:

Երաժշտութիւնը լացող մի հոգի է, անծանօթ ու հեռաւոր, որ քո հոգին է. անորոշ ու հզօր փափազ, որ կեանքիդ ունայնութեանը եւ քո աննարութեանն է թարթում, որպէս մութ ու մոլոր անապատում խուսափող մի նրագ. մի անծանօթ երազ, որ ժպտում է ու զնում, միշտ հայեացգդ իր ցոլֆերին կապած. մի անծայր ու անորոշ կարօտի անուշ թախիծ, գուրգուրիչ տրտմութիւն մի հեռաւոր ու անյայտ գերեզմանի վրայ, ուր թաղւած մէկը կայ ու նւում է ֆեզ համար. անապատում մոլորւած մի զրնգան կարաւան, որ տանում է էութեանդ ամենաթանկ մասը – քո հոգին:

Երաժշտութիւնը անմահութեան մեր անզօր տենչչի հառաչանքն է խոր, մահու կոկիծը, անցած օրերի սուգ ու հեծկլտանք եւ գալիքի տրտմութիւն, օրօրը մայրական եւ աղօք-քը թաղման:

ՑԱՍԿՈՏ ԵՐԿՈՒՆՔ

Կայ մի այլ երաժշտութիւն, որ տրտմութիւն չէ, այլ ցասում, որի նուագարանի լարերը ջլերն են զործող բազուկների եւ հնչիւնները՝ վիթխարի տնեցը աշխատանիքի: Տնեց յաւիտենական բիթմով, որ հնչում է երբ մուրճներն են զրնգում քանձր սալի վրայ, քրտինքն է քշշում շիկացած երկարին, քուրան է եռում իմացական հեւեռով, հրաշունջ մեքենան է որակում հարքած գազանի պէս, անիւներն են շառաչում խելագար քափով: Հրաշագործ բնազդական արւեստն է այն աւերող ու ստեղծագործող, որ երկնում է ցասումով, փշրում է նիւթը, որ մայրն է տանշանիքի:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՌԻԹՄ

Հովերն են սուլում խրնիթների վրայ ուր քշւառութիւնն է ծւարած: Մրրիկները ժայռերը ծեծում, ծովն է փոքորկուում, ափերը կրծում, միշտ տիեզերական մի տնեց է, որ հնչում է բնութեան ծոցից յաւիտենական բիթմով:

Անծայր երաժշտութիւն, որ ոչ սկիզբ ունի, ոչ վախնան:

ՄԵԼԱՆԻՕԼԻԱ

Մենակ եմ, վիշտ իմ:

Կեանիքի փոքրորկու ծովը յոյսերիս փլսրուն նաւը
խորտակեց եւ ալիքները տրտմութեան ափերը նետեցին ինձ:

Ահա վերստին մենակ եմ, վիշտ իմ:

* *

Մութ անկիւնում ինձ պէս յոգնած մի նպուռ
կեանիքի ձանձրոյթն է երգում, միակերպ, անվերջ,
եւ սուերները մեղմիւ փափուր են լոռութեան մէջ
ունայնութեան յաւիտենական զրոյցները, որոնք ո՞չ
սկիզբ ունեն, ո՞չ վախճան:

* *

Ո՞վ է հեծկլտում լուսամուտիս տակ. խաւարի
մէջ պառաւ վհուկը բանդում է տարիների զործուածքը
եւ գիշերը շշնչիւնով համարում է սրտից ծորացող
արիւնի կարիւները:

* *

Հանդա՛րտ, մի՛ բրբռա սի՛րտ իմ, բռող որ
քամի, չէ՞ ամեն մի կարի իր հետ տանում է ուսերս
ննշող ձանձրոյթի այս հսկայ բեռի մի մասը:

Թող որ քամի, սի՛րտ իմ, ես ու դու շատ ենի
յոգնած, շա՛տ ենի մենակ:

Այնտեղ ներքեւում դագաղագործը սղոցում է
տախտակները, նրա տենդու հարւածի ձայնը հնչում
է ուժգին եւ ծեր վարպետը անյոյզ ու խաղաղ լուծում
է կեանիքի բարդ առեղծւածը:

Շուտ, շո՛ւտ, ծերո՛ւկ, այնպէս ծանր է այս
բեռը . . .

Մենա՛կ եմ, վի՛շտ իմ:

Էլ ոչ ոք չ'ունեմ, էլ ոչինչ չ'ունեմ: Ամենիք լիեցին
ինձ եւ անցան, ինչպէս անապատում մենաւոր
շիրմի վրայից սուրացող հողմերը, ինչպէս ցամաքած
ովագիսը լիող կարաւան, ինչպէս դատապարտուածի
վերջին քունը ոսկեզօծող երազները:

Ո՛չ սէր ունեմ, ո՛չ հաւատ եւ ոչ ցնորքներ:

Մենակ եմ, վի՛շտ իմ:

Ունայնութեան նաւակի վրայ առագաստ բացած՝
իմ դժբախտ սէրը չւեց դէպի այլ հորիզոններ, հաւատս
մեռաւ նենգութեան օձի կծիկների մէջ եւ ես
նրան քաղեցի գիշերւայ կրծքում, որպէսզի արեւի
ո՞չ մի շող չը կարի նրա դամբարանի վրայ. ցնորքներիս
բուրաւէտ փունջը կեանիքի դատնութեան հողմերը
փետեցին եւ նրանց քերքիկները աշխարհի հզօնների
ոտների կոխան եղան:

Էլ ոչ ոք չ'ունեմ, էլ ոչինչ չ'ունեմ:

Հոգուս կապտւած ու աւերակ տաճարից աստւածները խոյս տւին եւ էլ ոչ մի քննոյշ ձեռք չի խընկարկում յոյզերի բուրվառը սիրուց ու յոյսից որբացած սեղանի առաջ:

Եւ դագաղագործը ներքեւում սղոցում է տախտակները:

Շուտ, շուտ, ծերուկ, այնպէս ծանր է ձանձ-
րոյքի այս բեռը իմ փխրուն ուսերի համար:

Մենակ եմ, վիշտ իմ:

Այդ դու ես . . .


Նա այնպէս ներս մտաւ ինչպէս երկնից թարթող
աստղի գունատ մի ցոլք, ինչպէս բնած մանկան երե-
ւակայութիւնը շոյող երազ:

Դո՞ւ ես, ի՞մ վիշտ, ես նանաչում եմ այդ մար-
մարէ նակատդ, որ ցափ սեւ ծաղիկներն են պսակում.
այդ ծով աչքերդ, ուր թախիծն է լողում սգուր ու
այրի կարապի պէս, նանաչում եմ մարգարտի պէս
վճիտ կայլակները, որոնք իշնում են թերթերունի-
ներիցդ եւ կախում են դալուկ այտերիդ վրայ. նա-
նաչում եմ այդ նուրբ, դողդոջուն ու գունատ շըր-
թունիներդ, որոնց հպումը ես միշտ զգացել եմ իմ
դժբաղդ նակատին եւ այդ թաւ ու ալեծածան վար-
սերդ, որ գիշերներն են հիւսել ու չենաղ գլխին, որ-
պէսզի նրանց հարուստ ծալքերի մէջ թագցնեն տիե-
զերքի ցափ գաղտնիքը:

Այդ դո՞ւ ես, ի՞մ վիշտ, օ՛, ես այժմ գիտեմ, այդ
դու ես թափ տալիս ծերուկ վարպետին իմ դագաղը
կերտելու, դու ես պառափ ձեռքով քանդում գործ-
ւածքն իմ կեանիքի. դու ես երգ տւել այս խեղն նպու-
ռին կեանիքի ձանձրոյքը սգալու, դու ես հեծկլտում
խաւարի մէջ տիեզերական հսկայ դամբարանի վրայ:

Մենակ եմ, վիշտ իմ, եւ ես քոնն եմ վերստին:

Ա՛ռ ինձ դարձեալ չենաղ ու բուրաւէտ բազուկնե-
րիդ մէջ, սղմիր ու կրծքին եւ թող թերթերունիքնե-
րիցդ կախւած արցունիներն ընկնեն իմ դժբաղդ



1920 – Փարիզ.

գլխին եւ գունատ շրթունքներիդ պաղ համբոյքը
դրոշմակի իմ տանջւած ճակատին:

* *

Ես քեզ փնդրել եմ կոյսի սեւորակ աչքերում, ուր
մի օր իմ սէրն էր ապաստանել որպէս լեռնային գե-
ղեցկուհին սեւ վրանի տակ. Ես քեզ փնդրել եմ քոլոր
տառապողների արցունիքի ու հառաչանքի մէջ, Ես քեզ
փնդրել եմ դամբարաններում, ուր մեռնում էին վեր-
ջալոյսի շողերը:

Տակաւին տղայ՝ գունատ ու երազուն, դո՛ւ Էիր
հրապուրում ինձ դէպի լսիս անտառների միայնու-
թիւնը, դէպի լսուլ, մթին ձորերը, հինաւուրց կաղնու
ու ծերուկ ժայռի անհամբոյք կրծքին առանց պատ-
ճառի լալու համար: Դո՛ւ Էիր վարդագոյն շամանդա-
դի միջից վաղորդեան շողերի հետ զարքնող կեանքի
վրայ բեկրեկուսմ ու ցոլք արձակում եւ երեկոյեան
վերջալոյսին լեռնակատարների վրայ ժպտում քալս-
ծուու ու անհուն ժպտով: Կապտաւուն մշուշի մէջ դու
Էիր ծածանւում երազուն լնի վրայ, ուշ գիշերներին
դու Էիր փափսում նոնիների մէջ, որոնք գլխիկոր դի-
տում էին իրենց ներքեւ հանգչող գերեզմանները:

Մենակ եմ, վիշտ իմ,
Եւ քո՛նն եմ ես . . .

1906.

ԾԵՐՈՒԿ ԶԱՆԳԱՀԱՐԸ

Գրիչս վար դրի. խորունկ գիշեր է:

Յոգնած գլուխս տնիքում է ցաւագին:

Լուռ է շուրջս:

Եւ համատարած լոռութեան մէջ՝ մի զանգի ձայն
եմ լսում մերք որպէս ամենահեռաւոր աստղի վրայ.
թաղման մի խուլ ու անհուն դօղանց, մերք որպէս
տիեզերքի անդունդներում մի վիթխարի պղնձի ան-
դադրում տնիքոց եւ մերք որպէս արեւներից ու եր-
կընից անդին, անհունի մէջ կախւած երկու դիւք-
կան պղնձէկ գնդերի յարատեւ եւ համաշափ քաղլուու-
մից ծագող հնչիւններ, դողդոջ ու թաւ. զըրը՛նգ, զը-
րը՛նգ, զըրը՛նգ . . .

Եւ պմեն մի զրբնգոցը ծնունդ է ու մահ:

Ինչո՞ւ ապրել, ինչո՞ւ խորիել, ինչո՞ւ զգալ, լալ
ու խնդալ, ինչո՞ւ յուսալ ու պայքարել, ինչո՞ւ տեն-
չալ յաղթանակը, ինչո՞ւ ողբալ պարտութիւնը – ի՞նչ
ասել է յաղթութիւն ու պարտութիւն, յոյս ու անյու-
սութիւն, փառք ու մեծութիւն, յոյզ ու խնդութիւն,
երբ այդ զանգը կայ, կայ, կայ . . . Երբ նրա դօղան-
ջը ընթանում է ստեղծագործական րիթմի հետ, ինչ-
պէս մահու ծածուկ քրֆիջը ծննդեան երկունիքի հետ:

Ո՞վ է տիեզերական յարատեւ թաղումի այդ
վիթխարի Զանգահարը, ո՞ւր է նա, մի հեռաւոր
աստղի՞ վրայ, տիեզերքի անդունդներո՞ւմ, թէ՞

արեւմերից ու երկինքներից դէն, տիեզերքից դուրս
եւ տիեզերքն իր ձեռքին:

Չը գիտեմ, չը գիտեմ, չը գիտեմ . . .

Ես նրա զանգի ձայնն եմ լաւում, միապաղաղ ու
թաւ դօղանց իրար բաղլուող պղնձնաների, թաւ ու թեկ-
րեկ ձայն, որպէս ծերուկ, խելագարի յիմարական
քրֆիչ մի անսահման այրի մէջ:

Վայրկեաններ չի խփում այդ անօրինակ ու ահա-
ւոր Զանգահարը, ոչ ժամ ու օրեր – ժամանակից
դուրս բեկրեկուում է որպէս պղնձէկ անձրեւ, որ մաղ-
տում է տիեզերքի վրայ եւ իմ հոգում:

Ու ամեն մի կարիլը ծնունդ է ու մահ, ժպիտ է
ու ցաւ, բաղդ է ու դժբաղդութիւն, խանձարուր ու
գերեզման միաժամանակ. ծնունդի առջեւ մահն է
քրֆջում, ժպտի վրայ արցունիքն է կախւած, խան-
ձարուրի տակ՝ գերեզմանն է հետում բերանաբաց:

Եւ վիթխարի զանգի դօղանջը լսում է յարատեւ
ու համաշափ՝

զըրը՛նգ, զըրը՛նգ, զըրը՛նգ . . .

* *

Կա՛ց, կա՛ց, ո՞վ ծերուկ խելագար:

Կա՛ց մի վայրկեան, մի հազարերորդ վայրկեան
կա՛ց: Զե՞ս տեսնում թիթեռնիկը դեռ արեւի առաջին
ցոլքը չը խմեց, կոկոնն իր աչիկը լոյսին չը բացեց,
նորածին մանկան շրթունքը մօր ստիճքը չը գտաւ,
ձագուկը դեռ նոր փշրեց կտուցով ձուի կեղեւը, արե-
ւին նայեց ու նւաց. նորածին եղնիկը, տե՛ս, դող-
դոջում է խոտերի մէջ մօր արգանդի զերմութեանը
կարօտ:

Կա՛ց, կա՛ց, ո՞վ ծերուկ խելագար, վիթխարի ու
ահաւոր Զանգահար, քո սարսափից մարդը կրօն ու
Աստւած է յօրինում եւ ի վերջոյ գիրկդ ընկնում
առանց կրօն ու Աստւած։

Սիա ես եւս հնազանդ քո ձայնին իշնում եմ արե-
ւս հետ քո ցուրտ գիրկը, իշնում եմ միլիօնների
հետ, բայց թո՛ղ որ թիթեռը արեւի ցոլքը խմի, թող
որ կոկոնը բացւի ու բուրմունք արձակի, թող որ մա-
նուկը ժպտայ ցոլքին ու ծաղկին, ձագուկը թոչի,
լոյսի մէջ լողայ, եղնիկը խայտայ մօր ոտների տակ,
կա՛ց, կա՛ց . . .


* * *

Զանգը հնչում է խորունկ լոռութեան մէջ անողոք
ու յամառ, թաւ ու բեկ-բեկ անհունի ծոցից որպէս
ծփանքը պղնձէ ծովի, որպէս հեծկլտանք երկնող
թնութեան, որպէս հեկեկանք անվերջ հոգեւարքի,
որպէս սարսուռը վիթխարի փլուզումների։

Յոգնած գլուխս սղմեցի ձեռքերով, որպէսզի
խեղդեմ դրնդիւնը բիւրաւոր ոտնաձայների

Նրանց՝ որոնք անցան,
Նրանց՝ որոնք անցնում են,
Նրանց՝ որոնք անցնելու են
ծերուկ Զանգահարի բազուկի թափով՝ որպէս մրրկի
շնչով։

Ինչո՞ւ ապրել, ինչո՞ւ խորիել, երբ այդ վիթխա-
րի զանգը կայ իր անողոք Զանգահարով, երբ ճա-
կատագրական դողանջը, որ ֆրեշն է մահուան – հըն-
չում է խանձարուրի վրայ։



1937, Յուլիս – Բալարիւկ Լէ Բէն (Ֆրանսայ)

ՑԱՍՈՒՄՆ

Ի՞նչ խաւար է դուրսը:

Հողմերն են լալիս մի հին ցաւ խորումկ ու անձայր:

Իմ մենաւոր խցիկը եռում է անծանօթ ու խոհուն շշուկներով: Հեծկլտանք կայ անկիւններում:

Ո՞վ է հեկեկում, ո՞վ է ծւատում իր կուրծքը եղունգներով:

Ի՞նչ խաւար է դուրսը. մի չար ձեռք շորբել է երկնից բոլոր աստղերը եւ դեպի Աստւած տանող բոլոր նամբաները փակել խաւարով – ի զուր են հեծեծում խունապած խեղներն ու անմարները:

Կատաղի հողմը դոնակս է կրծոտում եւ լապտերիս բոցերը խաղում են սուերների հետ: Ու հոգիս՝ լապտերիս պէս պլալան, աղօթք է փնդրում, որ շիկացած նետի պէս այս խաւարի քանձրութիւնը պառնէր Աստծուն հասնելու համար:

«Տէ՛ր, լոյսդ տուր ինձ զարգանդով լեցուն այս գիշերը վանելու խունապած ու անտուն քշւառների առաջ.

«Տէ՛ր, կրակդ տուր ինձ ահեղ ու հրաշագործքն այս ախտաւոր տիեզերքը սրբելու, ո՞վ Աստւած քշւառութեան ու ցասումի . . .

Զէ՛, այս չէ ուզածս.

Մրրիկի խօսքեր – ու հոգիս աղօթք է պրպտում:
Դուռս նոնչաց:

Քամի՞ն է . . . Ո՞չ:

Մէկը կամացուկ ներս մտաւ պատանեն ուսերին
ու պատերի ստերների հետ լուծւեց անձայն:

— Ո՞վ ես դու.

— Ես քո աղօթ-քն եմ:

— Իմ աղօթ-քը . . . բայց . . .

Նա հանդարտ մօտեցաւ ինձ, ժպտաց աչքերիս
մէջ իր անհուն ժպիտը մեռելի, եւ փշեց լապտերս
մարեց:

— Քայլի՛ք եւ դուն, ասաց:

Դուրս եկայ գլխաքաց եւ բոկոտն, ու առանց ցա-
ւի ու առանց աղօթ-քի, խունապած ամբոխների թշ-
տառութեան ու ցաւի հետ, մենք մեր հոգիների ու
մտածումների մէջ – Աստծու թաղումը կատարեցինք
այն գիշեր: Թաղեցինք Աստւածը եւ յետոյ՝ մեր ցա-
սումի շունչով նամբայ ընկանք մի նոր Աստւած
փնդրելու:

Յունիս, 1918.

ԹԻԹԵՌԸ

Ուշ գիշերային մենութեանս ժամին, մի մոլոր-
ւած թիթեռ լուսամուտիցս ներս ընկաւ, լապտերիս
շուրջը պտոյտներ գործեց, պլպլան բոցի ցոլքերը
խմեց ու կրակից հարբած՝ փնդրում էր մէկին խելա-
յեղ քափով:

Փնդրում էր մէկին եւ իր ստերին փարեց:

Փխրուն թեւերով զարկում էր պատերին, ձե-
ղունին, սիւնին, ամեն տեղ՝ ուր ինքը տանում էր իր
ստերը ու իր կրակը:

Ստերը փախչում էր ու միշտ մօտիկ էր, քաշում,
դիւքում էր ու, չը կար, չը կար. եւ թիթեռը նրա
յետերից կրակով հարբած՝ փշրում էր իր թեւերը,
զարդում էր իր կեանքը իր իսկ ստերի համար:

Եւ փշրուած թեւերով յատակին ընկաւ . . .

Նայում էի խեղճուկ թիթեռին, եւ աչքերս քա-
ցացան:

Թիթեռի՞ համար . . .

Չը գիտեմ.

Արցունեներս իջան այտերս ի վար.

Պատրանենից յոզնած հոգիս էր լալիս:

Եւ թիթեռն ընկած էր յատակին փշրուած թեւե-
րով ու անկենդան:

Յունիս, 1919.

ՏՕՆԱՎԱՃԱՌ

Ուշ գիշերային մենութեան ժամն է.
Աշքերիս առջև անդունդի խորքին սեւ գետ է
հոսում ու մտածումներս՝ ափերին շարւած
վախլուկ մանուկներ սուրացող ժամերի
ֆղանցին են փարել, դադար են հայցում:

Ու դադար չկայ . . .
Մի դաժան աստծու մտրակն է շաշում անհունօրէն
ահեղ երգը լոռութեան.
Ու ամեն ինչ պանում է խելայեղ վազքով:

* *

Մտածումներս տանջանք են ահա.
Տօնավաճառից հենց նոր դուրս եկայ.
Եւ առք ու վաճառք ողջ ձախող անցան.
Էլ ո՞ւր յետ դառնամ:
Գիշեր է ահա.
Իմ անցած նամբին մի անծանօթ ձեռք բոլոր
կամուրջները աւերեց.

Ու լոռութեան մէջ մի հարբած ասուած իր
արարածների բաղդին է քրքջում ու մտրակը
շարժում շառաչինով ահեղ . . .

* *

Լապտերիս շուրջը մի թիրեռ է խաղում.
Երազ է փնդրում կրակով հարբած.
Ու գտաւ նրան. բոցերից ծնաւ.
Լոյսերով օծուն գեղեցիկ էր նա.



Եւ փախչում էր ու միշտ մօտիկ էր.
Քաշում էր, դիւքում եւ կար ու չը կար:
Սիրահարը նրա յետեւից զարկւեց ձեղունին,
սիւնին, պատերին.

Ապա երազի սիրուն մի յետին նիզով նետւեց բոցերի
մէջ, քեւերն այրեց ու անկենդան յատակին
փռւեց:

Միւսը էլ չը կար. իր ստւերն էր այն . . .
· · · · ·

Աչքերս թացացան.

Պատրանիքից յոգնած հոգիս էր լալիս:

* *

Տօնավաճառը շատ հեռու մնաց,
Ուր առք ու վաճառքից այնպէս փոշման եմ:
Ա՛հ, ինչպէս կ'ուզէի նորէն յետ զնալ.
Եւ շուրջն խաւար է ու այնպէս ուշ է.
Հին է այս նամբան. այն մօրուց գիտեմ.
Թէ ո՞ւր եմ զնում, այս է որ չը գիտեմ.
Մի դաժան աստծու մտրակն է շաշում.
Եւ ամեն ինչ սլանում է խելագար վազքով.
Ու դադար չը կայ . . .

1919.

ԾԵՐՈՒՆԻՆ ՄԵՆԱՀՈՐ

Ես նրան ամեն օր տեսմում էի հասարակաց պարտիզում:

Նա այնին գունատ էր այն ծերունին եւ այնպէս վտիտ ու անուժ: Խունացած ու մաքուր զգեստը վերէն վար կոնկած ամառ թէ ձմեռ, ոտներին մի զոյգ մաշւած հողաթափեր, եւ գլխին մի փոքր թեք դրած մի հնամաշ գլխարկ: Խսպառ ներմակ միրուբ ունէր, նոյնպիսի յօնիք, հեզ ու խոհուն աչքեր, բարի ժպիտ եւ բաց, հրապուրիչ արտայայտութիւնով դէմֆ: Քայլում էր հասարակաց պարտիզում բազմութեան միջից առանց ամբոխը տեսնելու, ու միշտ մի վարդ ունէր ձեռքին եւ մի այլ ծաղիկ կրծքին դրած: Հոտոտում էր ձեռքի ծաղիկը, եւ փնդրում նորերը: Գուրգուրում էր ծաղիկները – ժպտում էր ծառերին, խոտերին, կանաչներին, բռչուններին հասարակաց պարտիզով անցնելիս:

Ոչ ոք չը գիտէր, թէ ո՞վ էր նա եւ ինչո՞ւ այդպէս: Մարդիկ նայում էին նրա յետեւից հեգնական ժպտով, շներն էին հաջում եւ մանուկները յետեւից ընկնում ու բարեր նետում:

Եւ նա ժպտում էր մարդկանց, մանուկներին, շներին:

Ու մի անգամ մի բար դիպաւ ծերունու գլխին եւ արիւնը ծորաց ձախ քունքի վրայով:

Նա կանգ առաւ, ձեռքով բռնեց վերքը, շուրջը

նայեց, դէպ ինձ վազեց շտապով, ականջիս կռացաւ եւ երկիւղով շշնչաց.

— Գիտե՞ս ինչու են սրանք այսպէս հալածում ինձ, որովհետեւ ես իրենց նման չեմ, բայց չասե՞ս նրանց, չար են . . .

Եւ դարձեալ ժպտաց ու միշտ մի ձեռքով քունքը բռնած, միւսով իր անբաժան վարդը, շտապով հեռացաւ, ժպտալով ծաղիկներին, խոտերին, ծառերին, կանաչ տերեւններին ու մանաւանդ բռչուններին:

Ես նայում էի յետեւից, ու մեքենայօրէն կրկնեցի իր խօսքերը. «Ես իրենց նման չեմ:»

Կրակէ խօսքեր էին, որ առեղծւածական ծերունին դարերից շորքելով, մանկան անմեղութեամբ՝ շպրտեց ու անցաւ.

«Հալածում են ինձ, որովհետեւ ես իրենց նման չեմ:»

Բոլոր խաչելութիւնների, բոլոր նահատակութիւնների, խարոյկների, բոլոր բարկոծումների գաղտնիքն էր, որ մրմնչաց ու անցաւ:

Դարերն ու սերունդները ժանիքներ ու նիրաններ ունեն բոլոր նրանց համար, «որոնք իրենց նման չեն»:

Վա՛յ նրան, ով նման չէ ուրիշներին ու . . . անզօր է:

ՀԱՅՐԸ

Ծերունին մեղմիւ դուռս բացեց, ու ծունկի եկած յատակին, ձեռները տարածեց օդի մէջ.

— Երկու գաւակներս սպանեցին այս գիշեր իմ դրան առաջ, դա՛տ ու արդարութիւն . . .

Նրանց հայրն էր . . .

Ծեր այտերի վրայից արցունիքի պղտոր կարիլ-ներն իշնում էին, գլորում ներմակ միրուֆի վրայից ու քրջում յատակը:

— Դա՛տ ու արդարութիւն, գաւակներս մորքեցին, մրմնջում էր դժբախտ ծերուկը:

Պաղ սարսուռը ուսերից սկսեց ու վար իշաւ քիկունիվս: Ի՞նչ դժւար է փշրել ցափ շղթան, որ կապում է ամենին:

Գրկեցի ծերունու գլուխը ու պինդ, պինդ կրծքիս սղմեցի ու արցունիներս խառնեցի նրա արցունինըին:

Մենք հեկեկում էինք, նա իր գաւակների համար, ես էլ իր ծեր արցունիքի:

Կա՞յ աշխարհում արդարութիւն, որի հարւածը չարագործի հետ չը խորտակի ե՛ւ անմեղներին:

ՄՈՒՐԱՑԻԿ ԵՂԲԱՇՐ

Մուրացիկ եղբայր, դու իմ տանջանին ես. ահա մենութեանս մէջ ես քեզ եմ յիշում: Դու այնպէս դըք-քաղդ էիր փողոցում այն օրը: Զիւն էր մաղլում քո ալեզարդ ու տառապած գլխին, ցնցոտիներդ քեզ չէին պատսպարում ցրտից, դու դողդողում էիր ու հեծեծում: Եւ չորացած ձեռքդ ինձ մեկնեցիր եւ աղերսագին հայեացքդ հոգուս մէջ մլսեցիր կրակէ նետի պէս:

Յիշում եմ. ձեռքիդ մէջ արծաք դրամներ քափեցի առատօրէն եւ այնպէս երջանիկ էի, լսելով քո օրինութիւնն ու գոհութեան մրմունջները:

Եւ այժմ մենութեանս մէջ քեզ յիշելով ամօքից նակատս է կարմրում, որովհետեւ, դու քաղցած, դու ցրտահար, դու անարգւած եւ հոգիս խայտում էր քո քշւառութեան գնով բարիք գործելով:

Մուրացիկ եղբայր, եքէ գիտնայիր, քէ ինչ երջանիկ էի քո քշւառութեամբ, դու դրամները նակատիս կը շպրտէիր. դու այդ չ'իմացար, դու այդ չ'արիր:

Եւ այժմ ե՛ս եմ դժբաղդ, ե՛ս եմ մուրացիկ իմ խղնի առաջ: Մի անծանօթ երկնեֆից ձիւն է մաղլում հոգուս վրայ, ցնորական լեռներից ցուրտ հողմն է մտրակում էութիւնս, եւ այնպէս մրսում եմ, ու այնպէս խեղն եմ կեանիքի մեծ նամքին կանգնած:

Մուրացիկ եղբայր, դու իմ տանջանին ես, այս մենութեանս ժամին, երբ քեզ եմ յիշում:

Դուրս եկայ դռնիցս եւ ձիւնի ու փոք-որիկի մէջ գնացի հեւ ի հեւ դէպի մուրացիկը:

Ուզում էի հարւածել ու լացացնել նրան, որ նզովի ինձ: Նա չկար . . .

Փետր. 19 - գիշեր ժ. 1. 1918.

ՍՖԻՆՔԸ

Կահիրէից դուրս ընկայ դէպի անապատ, որ կենդանի հրէշի պէս ձգում էր հեռուն յօրանջուն ու խոհուն ու քաշում էր ինձ որպէս վիշապ:

Անապատի հեռուն խորհրդաւոր հրապոյրներ ունի Աստուծոյ պէս անբացատրելի ու հզօր:

Դեղին, յեղյեղուկ այդ հարթութիւնը մի վիրխարի մտածումն է ասես, որ թրթրում է աւազների հետ, գալարում, եռում, բարձրանում փոքորկի շնչով, թարթառները կազմած բարկ աւազներով՝ երկրնի ու երկրի մէջ կամուրջ ձգելու, հարթութիւնները բլուրների եւ բլուրները հարթութեան վերածում. կարաւանները թաղում եւ մոլորւած ֆելլահի աղօթ-ֆի հեծկլտոցը խեղդում ու նեղոսի կողերը սրդմում ու կրծոտում, որպէսզի շտապով հեռանայ ու ծովը նետի:

Վեհափա՛ռ ու գարհուրելի անապատ . . .

Ու քայլում էի թանձր աւազների մէջ այնպէս, ինչպէս կը քայլէի մի հինաւուրց աւեր տանարում, ուր մի հին աղօթ-ֆ կայ քարացած, մի հին ցաւ, որ մխում է քարերի մէջ, մի վիշտ, որ հեծկլտում է մեղմիւ, ունայնութեան ցասկու մի անէծֆ, որ եռում է լուռ, ինչպէս օար գալարուն:

Քայլում էի այնպէս, ինչպէս մեղսաւոր աշխարհի ցոփ ոստանների շւայտութիւնից ու գարշանից թեռնաւորւած մի հոգի, որ Աստուած է փնդրում մենութեան, անհունութեան մէջ, իր սեփական մարմինը խոշտանգելու, սրբազործելու, բարձրացնելու համար:

Քայլում էի անապատում, ուր հոգիս Աստուածն

էր փնդրում, որ այնպէս մօտ է, մօ՛տ է ու այնպէս զարհուրելի:

Խօսք ունէի ասելու Աստծուն, մանուկ օրերից հոգուս մէջ թառած մի հարցում:

Քայլում էի անապատում եւ սփինքսի առջեւ կանգնեցի սասանւած:

Անապատի մտածումն էր այս, կանացի գլխով ու առիւծի մարմնով, այս հաստաբեստ ու անարւեստ զանգւածը քարէ թւում էր խոհուն մի մութ մտածումով, որ ամփոփւած էր աչքերի երկու սեւ խոռոչների մէջ:

Անապատի մտածումը, որ ո՛չ հեգնանք է, ո՛չ լաց – ո՛չ ժպիտ է, ո՛չ ցասում, ո՛չ ցաւ է եւ ո՛չ երանութիւն, այլ քարացած մի մրրիկ, անտեսանելի մի գիշեր, որի սեւ թեւերի տակ դարեր ու սերունդներ եռում են խօս գալարումներով ու անդադրում:

Եւ սփինքսը շարունակում է նայել . . .

Կանգնեցի քարացած եւ մանուկ օրերից հոգումն թառած դժւար հարցումը մոռացայ: Այս լռութիւնը, այս սեղմ շրթունքները իմաստութիւն ունէին, որի առջեւ հոգիս գունաւուեց ու սարսուաց, որպէս մանուկը, որ դողում է գիշերային խաւարից:

Վերջալոյսը զարմանահրաշ գոյներով հորիզոնը հրդեհեց, լոյսերի ծփանքները, երանգների յարափոփոխ խաղերը պահ մի երկինքը հրդեհեցին ու անցան:

Անապատի վերջալոյսը . . .

Երեկոյեան ատւերներն իջան, անապատի ըստ-ւերները, որոնք ընկնում են յանկարծ՝ ու խաւարի պատանեռվ պարուրում նամբորդին, որպէս եղեգնուտից սլացող վագրը:

Սփինքսը մաշւեց խաւարի մէջ, միայն զոյգ աչ-

ֆերը, որպէս երկու սեւ աստղեր տակաւին շարունակում էին իմ հայեացքն ու մտածումները գերել:

Մութ էր շուրջս եւ անապատը յօրանցում էր վեհօրէն, աստղերը թարթում էին այնքան մօտ, այնքան վառվուն, որ կարծես երկինքն իշնում էր վար, վար, նիրհող անապատի շունչը լսելու:

Ու մի անձայր լոռութիւն, որ ասես մեղմ տնիքում էր տիեզերական բիթ-մով. ոչ մի միջատ չէր նոռում, ոչ մի հով չէր թրթում:

Անապատի գիշերը գերեզման է, որից կրօններն են ծնւում:

* * *

Ինձանից մօտիկ աւազները խշշացին: Յետ նայեցի՝ առջեւս կանգնած էր մի դերվիշ:

— Յանուն Ալլահի, թոյլ տուր որ ես քո բաղդն ասեմ քեզ, բացականչեց նա աշ ձեռքը հանդիսաւոր իմ գլխին բարձրացրած:

Եւ խաւարի մէջ ես նշմարեցի նրա աչքերի փայլը, նրա վտիտ, չորացած մարմինը պատող ներմակ ծածկոցը, որ անհոգ ծալքերով իշնում էր մինչեւ սրունքները բաց ճգելով աշ ուսը. ես լսում էի նրա տաք, անհանգիստ հերքը՝ սպանական ու աղերսական միաժամանակ:

— Ո՞վ ես դու, հարցրի ես:

«Ես նա' եմ, որի առջեւ ժամանակն է մերկանում.

«Ես նա' եմ, որի կամքով լոռութիւնն է խօսում.

«Ես նա' եմ, որ նայում է բաղդի անդունդին
առանց գլխապտոյտի.

«Ես նա' եմ, որ ոչ լալիս է եւ ոչ խնդում, այլ
նայում է.

«Ես սփինքսն եմ, խոհուն ու խօսուն.



1924 — Կանն (Ֆրանսա)

«Թո՞ղ որ քո բաղդն ասեմ քեզ, ո՞վ ճամբորդ,
յանուն Ալլահի:»

— Եթէ դու գիտես առանց գլխապոյտի ան-
դունդը պրապտել, ուր բաղդերն են մարդոց, եթէ քո
առջեւ ժամանակն է բացում իր գաղտնիքները եւ
լուսութիւնն է խօսում քո կամքով, ասա՛ դերվիշ, ին-
չո՞ւ դու այսքան դժբաղդ ես, դո՞ւ, որ կեանքի
իմաստութեան գաղտնիքները գիտես:

— Ես դժբաղդ եմ — այդ իմ բաղդն է ու Ալլահի
կամքը: Թող որ քեզ ասեմ, բաղդաւոր թէ՞ դժբաղդ
պիտի լինես. քող ասեմ, թէ ի՞նչ է սպասում քեզ
այսուհետեւ:

— Լսի՛ր դերվիշ, կեանքիս արեւը թեմում է
դեպի իր մուտքը. եւ մինչեւ այսօր՝ կեանքիս արշա-
լոյսից սկսեալ՝ ես քայլում եմ դաժան, խոպան առա-
պարներով: Եւ ես արի եմ եղել, դերվիշ, որովհետեւ
անծանօթն ու անյայտը, որ մայր են սրտապնդիչ
պատրանքի, քաշել, տարել են ինձ: Անգամ ցաւագին
յոյսը իմ կրունկներն է մտրակել եւ ես գարշապար-
ներս փուշ ու տատասկի մէջ արնոտելով քայլել եմ
անընդհատ, որպէս ովազիս փնդրող մոլորւած կա-
րաւանն անապատում:

Թո՞ղ որ դարձեալ անյայտութիւնը իշխի կեան-
քիս մնացած ճամբին: Ես չեմ երկնչել իմ դժնդակ,
անողորմ ճամբաներից, ու անցել եմ համարձակ,
քող որ մնացածն էլ անցնեմ խարխափելով՝ բայց
յուսալով: Ես սարսափում եմ քո խօսքից, դե՛րվիշ,
դուն որ ո՛չ խնդալ գիտես, եւ ոչ լալ, այլ նայել:

Ես սիրում եմ լացը եւ խինդը, փոյք չէ, որ իմ
բաժինս աւելի շատ լաց եղաւ, քան խինդը: Ես վա-
խում եմ քո խօսքից:

— Ինչո՞ւ:

— Տե՛ս այս սփինքսը, դերվիշ, որ հազար ու հազար տարիներ ահաւոր առեղծւածի վրայ թուխս նատած՝ լուռ նայում է դէպի արեւելք։ Եթէ նա յանկարծ խօսի, մարդկութիւնը սոսկումից կը քարանայ։ Թո՛չ, թո՞ղին դերվիշ, ես չեմ ուզում, որ դու կեանքիս մնացորդը, իմ բաղդը ծածկող սեւ ժողը յետ քաշես։ Թո՞ղ որ ես քայլեմ խաւարի մէջ. կեանքը շատ է դաժան, շատ է թշւառ, որպէսզի ես այն տեսնեմ քաց աշքով ու դարձեալ ապրեմ։ Թո՞ղ որ ապրեմ, դե՛րվիշ, կեանքիս արեւը ահա թեքում է դէպի իր մուտքը։

Թո՞ղ յուսամ ու ապրեմ։

— Գնա՛, Ալլահը ֆեղ հետ, ո՞վ նամրորդ, դու ինձնից իմաստուն ես։

Ու նա մէկ էլ իր աջը բարձրացրեց օդի մէջ ու հեռացաւ — աւազները նորից խշրտացին, ու ես տեսայ, թէ ինչպէս նրա ներմակ ծածկոցը, ամբողջ այդ վտիտ ստւերը կամաց կամաց լուծւեց ու չքացաւ խաւարի մէջ. մինչդեռ հեռուից դեռ լսում էր նրա վշշոցը։

«Ալլա՛հ, Ալլա՛հ, Ալլա՛հ . . .»

Թողեցի սփինքսը ու անապատը, ու աստղերին նայելով՝ քայլում էի թանձը աւազների մէջ ծով խաւարում, ինչպէս քայլել եմ ողջ կեանքս։

Անապատը յօրանջում էր խաւարի ու կրօնների վրայ թուխս նատած, մեծ լոռութիւնը մեղմիւ զրնգում էր տիեզերական իր բիթմը, եւ ես քայլում էի աւազների մէջ աշքերս դէպի արեւելք, ինչպէս սփինքսը, սպասելով արշալոյսին՝ որ պիտի գար, որ պիտի գար։

ՄՈՌԱՑՈՒՄՆ

Տէ՛ր, մոռացումդ տուր ինձ,
Մտքիս արեւը քո սեւ ամպերով ծածկիր,
Խաւարը թող այնպէս թանձրանայ, որ յուշերիս բոլոր
արշալոյսերը մարեն։

Տէ՛ր, մտածումիս թեւերը փետիր։

Տես հոգիս քաց է քո առջեւ, որպէս մխացող վէրք.
ամենակարող մատդ դիր այնտեղ, ուր մի
խեղդող միտք է թառած ու սրբիր այն որպէս
հրաշէկ երկաքռվ։

Տէ՛ր, մոռացումդ տուր ինձ.

Յուշերս ողջ բոցեր են կիզիչ,
Քո սուրբ շնչով փչիր, թող մարեն.

Անէծքով ու արցունիքով հարուստ քո աշխարհում
սոսկ մոռացումն է ֆեղ արժանի, եթէ դու կաս
Աստւած եւ եթէ բարի ես։

Մոռացումդ տուր ինձ, Տէ՛ր . . .

ՀՈԳՈՒՍ ԿԱՆԹԵՂԸ

Հոգուս բոլոր կանքեղները մարեցին . . .

Շիրիմներ կան այնտեղ՝ խաւար ու մոայլ, ու դոներ
չունեն.

Հերարձակ ու սգուր կինն է անցնում,
Եւ արցունիքի կիզիչ կարիլներով հոգուս փակ դռները
ծեծում.

«Զուր ես հեծեծում այս անլոյս խաւարի մէջ -

«Քո հառաջանքից էլ ո'չ մի դագաղ չի բացւի,

«Քո քափած արցունիք ո'չ մի շիրիմ չի ծաղկի,

«Աչքերիդ ցոլքից էլ ո'չ մի կանքեղ չի վառւի,

«Նրանիդ վարդից էլ ոչ մի երազ չի փքքի.

«Մի շիրիմ կայ դատարկ, մի դագաղ կայ պարապ.


«Յոզենած չե՞ս . . .

«Հոգուս բոլոր կանքեղները դո՛ւ մարեցիք . . . »

Մայիս 10, 1918.

ՍՊԻՐԻ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

Էջ 90



1937, Հոկտեմբեր – Մարսէլլ.

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՏԱՃԱՐ

Ես գունատ ու յոգնած ուխտաւոր եմ մի անծանօթ-
աստւածութեան կախարդական տաճարին:

Ո՛չ նրա անունը գիտեմ, եւ ո՛չ տեղը. մանուկ
օրերից լոկ նրա գաղափարն է իմ հոգում եւ
ականջիս մ'ջ մի անուշ զընգոց։ Այն զանգակների
ձայնն է անծանօթ-աստւածութեան

կախարդական տաճարի։
Մի աղօթ-ի կայ իմ հոգում, որ դեռ երբեք չեմ

արտասանել,
Մի արցունիք կայ իմ սրտում, որ դեռ երբեք չեմ
քափել.

Այն աղօթ-ին ու արցունիքն է մի անծանօթ-
աստւածութեան կախարդական տաճարին։
Դիւթիչ ու անծանօթ գանգակների ձայնն ականջիս,
Հայեացքս շեշտ՝ հեռու հորիզոններին,
Ես ողջ կեանքս ժայլել եմ խոպան, փշոտ

ճամբաներով։
Չեռքիս ցուպը մաշւած է ահա, ու կեանքիս
Արեւը քեֆում է դէպի իր մուտքը։ Կը հասնե՞մ
արդեօֆ . . .

Ես գունատ ու յոգնած ուխտաւոր
Մի անծանօթ-աստւածութեան կախարդական
տաճարի։

Մայիս, 17, 1918.
Թիֆլիս.

ՍՏԻԵՐՆԵՐՆ ԻԶՆՈՒՄ ԵՆ

Կեանիս արեւը թեքւեց դէպ մուտքը.
Ստւերներն ահա իջնում են հանդարտ.
Մազերիս մէջ արծաք թելեր են շողում,
Մօտալուտ ձմբան գունատ բամբերներ.
Էլի մի դուռ է, փակում է անդարձ,
Աստւած է հսկում, երքե՛ֆ չի բացւի.
Ափսոսանի չունեմ, ոչ տրտունջ ցաւի.
Աստորից անդին պատրանի է գունատ.
Արծաք պաշկով նակատնիս պատած՝
Փակ դրան առջեւ մենի լուռ ողջակէզ
Մի անյայտ ձեռքով, որ կեանին օրօրեց
Մինչեւ որ Սէրն ու Յաւը յագենան:
Ափսոսանի չունեմ եւ ոչ տրտմուքիւն,
Չէ՞ վերջալոյսի ցոլքերն անուշ
Հրկիզւած սրտի կայծեր են յետին,
Կատարւած աղօք-ֆ կեանինի խորանում:
Փա՛ռ-ֆ ֆեզ մայր բնուքիւն, դու միայն գիտես
Մեր ալիքների արծաք շողերով
Մահը զարդարել եւ անկուք-եան
Սարսափը մեղմել մշուշիդ քողով:

* *

Գիշեր է խորունկ. նրագս է պլպլում.
Յաւի ու սուգի այս ի՞նչ թափօր է պատերիս վրայ.
Ճանաչում եմ ձեզ, իմ հին-հին պա՛պեր,
Ո՞ր է՛ֆ շտապում, դէպի ո՞ր կայան,
Յոգնած գլխներիդ փոշի ցանելով.

Ո՞վ մտրակեց ձեզ այսպէս անողորմ,
Ո՞ր մրբկի տակ ձեր մէջքը ծուեց.
Ո՞ւմ է՛ֆ աղօքում Աստծուց թափուր
Մեր տաճարներում.

Ճանաչում եմ ձեզ, իմ հին-հին պապե՛ր,
Ճագար սերունդներ ձեր կողից ժայթ-քած,
Ճնանում կուտած ողկոյզների պէս,
Ճագար ազգերի ոտքերին կոխան
Մի ահեղ Աստծու գինին ջամբեցին:
Զուր է թափօրը յուղարկաւորի.
Ա՛հ, անցէ՛ֆ անձայն, ինչպէս որ եկաֆ.
Լոյսին սիրահար՝ նրագս եմ ատում,
Որ ձեզ դուրս շորքեց խաւարի խորքից.
Անցէ՛ֆ, լուծւեցէ՛ֆ անհունի ծոցում,
Մեր բաղդից հեռու՝ ձեր բաղդը լացէ՛ֆ:
Կեանիս արեւը դէպի մուտքն իջաւ,
Հրկիզւած սիրտս դեռ կայծեր ունի,
Եւ ամեն մի կայծ՝ մի ասող հաւատի.
Թողէ՛ֆ որ առանց ցաւի ու լացի
Դէպ անկուք-եան մշուշը դիմեմ
Իմ արեւի հե՛տ, իմ հաւատի հետ . . .

1500

18.474

Հրատարակութիւն՝

«Հրազդան» Հրատարակչական Ընկ.

Հասցե՝

V. AHARONIAN

525 West 182nd St., New York, N. Y.

Տպագրութիւն՝

The SANDAL PRESS

137-139 East 25th St., New York, N. Y.